ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

8 օգոստոսի 2014 թվականի թիվ 103 - Ա

ԼԱՐԻՍԱ ՀԱԿՈԲՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 2-րդ կետի 1-ին ենթակետը՝

ո ր ո շ ու մ եմ.

1. 2014 թվականի օգոստոսի 8-ից լուծել «ՀՀ Տավուշի մարզի Ազատամուտի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր տնօրեն Լարիսա Հակոբյանի հետ 24.07.2009թ. կնքած աշխատանքային պայմանագիրը:

2. Մինչև մրցույթով տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելը Լարիսա Հակոբյանին 2014 թվականի օգոստոսի 8-ից նշանակել «ՀՀ Տավուշի մարզի Ազատամուտի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար և կնքել աշխատանքային պայմանագիր:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հ. ԱԲՈՎՅԱՆ

2014թ. օգոստոսի 8
ք.Իջևան